Արձանագրություն N8

2022 թվականի հոկտեմբերի 19-ին ժամը 11.00-ին կայացած՝ եկամուտների վարչարարության բարեփոխումների հասարարական խորհրդի նիստի

1. ՀՀ ՊԵԿ իրավաբանական վարչության պետ Ա. Մնացականյանը ներկայացրեց օրակարգում ներառված նախագծերի իրավական տիրույթին վերաբերող փոփոխությունները: Մասնավորապես՝ նշվեց, որ հիմնական փոփոխությունները վերաբերում են նրան, որ ներկայումս քննիչի նախաքննական մարմնի որոշումների հիման վրա կայացվող ստուգման հանձնարարագրով ստուգման ակտերը ուժի մեջ են մտնում ընդհանուր կարգով, այսինքն, երբ ստուգման ակտը սահմանված ժամկետում ուժի մեջ է մտնում, որից հետո դրա նկատմամբ կիրառվում են անբողոքարկելի դառնալու կարգավորումները և ներկայացվում են կատարման: Սակայն, այդ ընթացքում դատարանում կամ վիճարկվում են այդ գործերը, քննիչի կողմից վարվող գործերի ժամանակ կարող են այդ հանգամանքները ևս փոփոխության ենթարկվել, այսինքն՝ ստուգման ակտը վերջնական տեսք չի ստանում: Նախագծով նախատեսվում է, որ այդ ժամանակ ստուգման ակտերը ուժի մեջ մտնեն քրեական գործով կայացված որոշման առկայության դեպքում, այսինքն, երբ կհանգուցալուծվի, քրեական գործով ընթացք ստանա, գործը կկարճվի կամ մեղադրական դատավճռով կգնա դատարան այդ պահից սկսած նոր կհամարվի ուժի մեջ մտած և դրա վրա կգործեն անբողոքարկելի դառնալու սկզբունքները:

Հաջորդիվ, ներկայացվեց բանկային գաղտնիքի հետ կապված նախագծով նախատեսվող կարգավորումները: Մասնավորապես, նախագծով նախատեսվում է, որ հարկային հսկողության ընթացքում հսկողություն իրականացնող անձինք իրավունք կստանան բանկից ստանալու բանկային հաշիվների վերաբերյալ տեղեկատվությունը: Ընդ որում, նախատեսվում է հետևյալ ընթացակարգը՝ եթե տնտեսվարող սուբյեկտը կտա իր համաձայնությունը, որպեսզի ճշտվի ներկայացված քաղվածքների իսկությունը, ապա հարկային մարմինը այն կարող է ներկայացնել բանկ՝ հավաստման նպատակով: Եթե

տնտեսվարող սուբյեկտը կտա համաձայնություն, ապա հարկային մարմինը բանկից կստանա հարկ վճարողի բանկային հաշիվների վերաբերյալ քաղվածքները։

Եթե համաձայնություն չի տրվի, ապա բանկային հաշիվների քաղվածքները կստացվեն դատական կարգով, որի հետ կապված՝ համապատասխան փոփոխություններ և լրացումներ են կատարվել Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքում։ Նախագծով նախատեսվում է նաև, որ հարկ վճարողների կողմից իրենց համար բարենպաստ համարվող տեղեկությունները հարկային հսկողության ընթացքում չտրամադրելու դեպքում՝ դրանք, որպես բարենպաստ փաստական հանգամանքներ չեն կարող ներկայացվել վարչական ակտի վարչական կամ դատական կարգով բողոքարկման վարույթում և հարկ վճարողները (հարկային գործակալը) կրում են դրանց բացակայության՝ գործի ելքը պայմանավորող բացասական հետևանքների ռիսկը, եթե չեն ներկայացնում բավարար հիմնավորումներ այն մասին, որ օբյեկտիվորեն զրկված են եղել նշված ապացույցները վարչական վարույթի ընթացքում ներկայացնելու հնարավորությունից։ Միաժամանակ, նախագծով սահմանվել է, որ դրանց չտրամադրման հետևանքով առաջադրված պարտավորությունների ապացուցման պարտականությունը (բեռը) չի կարող դրվել հարկային մարմնի վրա։

2. ՀՀ ՊԵԿ վարչարարության մեթոդաբանության և ընթացակարգերի վարչության պետ Հ. Մուրադյանը ներկայացրեց էլեկտրոնային առևտրի հարկման հետ կապված նախատեսվող կարգավորումները։ Մասնավորապես՝ նշվեց, որ կարգավորումները վերաբերում են բացառապես ԵՏՄ անդամ երկրների միջև իրականացվող փոխադարձ առևտրին։ Նախագծով հստակեցվում է նաև ապրանքների էլեկտրոնային առևտրի շրջանակներում առևտրի էլեկտրոնային հարթակը շահագործող Հայաստանի Հանրապետությունում մշտական հաստատություն չունեցող ԵՏՄ անդամ այլ պետության ոչ ռեզիդենտ կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից անհատ ձեռնարկատեր կամ նոտար չհանդիսացող ֆիզիկական անձին ապրանքների մատակարարման գործարքների մասով, որի մատակարարման վայրը համարվում է Հայաստանի Հանրապետությունը, ավելացված արժեքի հարկի հաշվարկման ու վճարման,

այդ թվում՝ Հայաստանի Հանրապետությունում մշտական հաստատություն չունեցող ԵՏՄ անդամ այլ պետության ոչ ռեզիդենտ կազմակերպության կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից մատակարարվող ապրանքների մասով հարկային մարմին համապատասխան հարկային հաշվարկի ներկայացման և ավելացված արժեքի հարկի վճարման հետ կապված իրավակարգավորումները։

Նախագծով՝ հաջորդ փոփոխությունը վերաբերում է հարկ վճարողների կողմից անալիտիկ հաշվառում վարելու պարտադիր պահանջի սահմանմանը։ Հարկային հսկողության շրջանակներում հանդիպում են դեպքեր, երբ հարկ վճարողները չեն վարում անալիտիկ հաշվառում կամ հարկային մարմնին չեն տրամադրում նման հաշվառման վերաբերյալ տվյալներ՝ հատկապես այնպիսի ոլորտներում, որոնցում նման հաշվառում չվարելը իրատեսական չէ։ Նախագծով նախատեսվել է, որ 200 մլն. դրամը գերազանցող իրացման շրջանառություն կամ համախառն եկամուտ ունեցող հարկ վճարողի կողմից առևտրական (առք ու վաճառքի) գործունեության մասով, ինչպես նաև առևտրական (առք ու վաճառքի) գործունեությունից տարբերվող գործունեության մասով անալիտիկ հաշվառում չվարելը կամ անալիտիկ հաշվառման տվյալները չտրամադրելը, եթե նման հաշվառման վարումը օբյեկտիվորեն հնարավոր է, հիմք է հարկային պարտավորությունները անուղղակի եղանակով հաշվարկելու (գնահատելու) համար։

ՊԵԿ ՎՄԸ վարչության պետ Հ. Մուրադյանի կողմից ներկայացված հաջորդ օրենսդրական փոփոխությունը վերաբերում է ֆիզիկական անձանց միջև ավտոմեքենաների օտարման գործարքների մասով եկամտային հարկի փոխարեն պետական տուրք սահմանելուն և դրա գանձումը Հայաստանի Հանրապետության ոստիկանությանը վերապահելուն։

Ներկայացված օրենսդրական նախաձեռնության վերաբերյալ խորհրդի անդամները բարձրացրեցին հետևյալ հարցերը։

«Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» ՀԿ ներկայացուցիչ Հ. Սահակյանը նշեց, որ պալատի կողմից ընդհանուր առմամբ ընդունելի են նախաձեռնած օրենսդրական փոփոխությունները, սակայն առկա են մի քանի

տեխնիկական հարցեր (առաջարկներ)՝ կապված էլեկտրոնային առևտրի հետ միկրոձեռնարկատիրության մասով, մասնավորապես՝ էլեկտրոնային առևտրի հասկացության սահմանման մասով հնարավոր է խնդիր առաջանա, այսինքն՝ չստացվի այնպես, որ ներկայումս գործող կարգավորումների համաձայն միկրոձեռնարկատիրության սուբյեկտներ չեն կարող համարվել էլեկտրոնային առևտրի շրջանակներում առևտրական (առք ու վաճառքի) գործունեությամբ զբաղվող կազմակերպություններն ու անհատ ձեռնարկատերերը: Էլեկտրոնային առևտուր հասկացությունն էլ միգուցե մեկնաբանվի 4-րդ հոդվածում նշված հասկացությանը համապատասխան: Դրա հետ կապված՝ նշվեց նաև, որ միգուցե անհրաժեշտ է համապատասխան փոփոխություն կատարել նշված հոդվածում, որպեսզի հետագայում խնդիրներ չառաջանան:

Հաջորդ հարցի հետ կապված նշվեց, որ Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններից Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ապրանքների մասով առկա են չափաքանակներ: Հարցրեց, թե արդյոք էլեկտրոնային առևտրի դեպքում կրկնակի հարկման հարց չի առաջանալու: Վերջինիս ի պատասխան, ՀՀ ՊԵԿ ՎՄԸ վարչության պետ Հ. Մուրադյանը նշեց, որ նախագծով նախատեսվող կարգավորումները միկրոձեռնարկատիրության սուբյեկտների վրա չեն տարածվում, քանի որ ըստ էլեկտրոնային առևտրի հասկացության օտարողը պետք է հանդիսանա ոչ ռեզիդենտ էլեկտրոնային հարթակը: Ինչպես նաև նշվեց, որ անհրաժեշտության դեպքում կփոխվի նշված ձևակերպումը: Իսկ ինչ վերաբերում է ԵՏՄ-ից ներմուծման չափաքանակներին, նշվեց, որ Կառավարության 13.02.2020թ. N171-Ն որոշման մեջ կկատարվեն համապատասխան փոփոխություններ, համաձայն որի՝ էլեկտրոնային առևտրի շրջանակներում ապրանքների ներմուծման դեպքում չափաքանակները հաշվի չեն առնվի, այլ ամբողջ ծավալի մասով ԱԱՀ-ն կվճարի ոչ ռեզիդենտը:

Հաջորդիվ բարձրացվեց հարց կապված՝ էլեկտրոնային առևտրի շրջանակներում ապրանքների ետ վերադարձի մասով օրենսդրության մեջ կարգավորումներ նախատեսելու հետ: Դրա հետ կապված ՊԵԿ ՎՄԸ վարչության պետ Հ. Մուրադյանը նշեց,

որ փորձել են պարզ մեխանիզմ կիրառել ոչ ռեզիդենտներին հաշվառում վարելու մասով չծանրաբեռնելու համար: Ոչ ռեզիդենտներն իրենք իրենց մոտ այդ մասով կիրականացնեն հաշվառում ու անհրաժեշտության դեպքում հաշվարկները կճշգրտեն: Բացի այդ, նշվեց, որ վարչարարության իրականացման տեսանկյունից ԵՏՄ անդամ պետությունների միջև նախատեսվում են թվային լուծումներ, որի դեպքում տեղեկատվության փոխանակման շրջանակներում ապրանքների ետ վերադարձի մասով կստանան համապատասխան տեղեկատվությունը և կիրականացվի հսկողություն:

«Հայաստանի աուդիտորների և փորձագետ հաշվապահների պալատ» ՀԿ ներկայացուցիչ Հ. Սահակյանը նշեց, որ նախագծով նախատեսվում է հանել շահաբաժիններից վճարված եկամտային հարկի գումարները պետական բյուջեից փոխհատուցելու դրույթները: Նշվեց, որ դեմ չեն այդ փոփոխությանը և միաժամանակ, նախկինում այդ հարցը ևս քննարկման առարկա էր դարձել: Նշվեց նաև, որ տվյալ դեպքում անհատ ձեռնարկատերերը և կազմակերպությունները անհավասար դաշտում են լինում և նամանավանդ, որ անուղղակի մեթոդների մասով նախատեսվող փոփոխությունների համաձայն անհատ ձեռնարկատերերին ևս չեն վերաբերում հաշվապահական հաշվառում վարելը: ՊԵԿ նախագահ Ռ. Բաղասյանը նշեց, որ անհատ ձեռնարկատիրոջ մասով հանել են կարգավորումները, քանի որ անհատ ձեռնարկատիրոջ հաշվառումը ֆիզիկական անձի հաշվառումից տարանջատելու մասով առկա է խնդիր, մասնավորապես՝ անհատ ձեռնարկատերն ինչպես պետք է կատարի հաշվառում , արդյոք պետք է սահմանվի որոշակի շեմ, որից հետք պետք է լուծարվի անհատ ձեռնարկատերը, որից հետո նորից գրանցվի որպես կազմակերպություն, ակտիվների տեղափոխություն ինչպես է կատարվելու և նմանատիպ այլ հարցեր: Առաջարկվեց նշված հարցերի կարգավորման նպատակով կազմակերպել աշխատանքային քննարկում:

«Էրնսթ Ընդ Յանգ ՓԲԸ ներկայացուցիչ Կամո Կարապետյանն առաջարկեց, որ շահաբաժիններից վճարված եկամտային հարկի գումարները պետական բյուջեից փոխհատուցելու դրույթները հանելու հետ կապված փոփոխությունը ներկայումս չկատարվի՝ հաշվի առնելով ամբողջ աշխարհում տիրող իրավիճակը ներդրումների

ներգրավման առնչությամբ։ Միաժամանակ, առաջարկեց սահմանել սահմանաչափ կամ ժամանակավոր հետաձգել այդ փոփոխության ընդունումը։

«Հարկ վճարողների պաշտպանություն» ՀԿ նախագահ Փ. Թադևոսյանն էլ քննարկվող հարցի հետ կապված առաջարկեց, որ շահաբաժինների վերադարձի մասով սահմանվի, որ ամբողջությամբ ներդնելու դեպքում կարող են օգտվել վերադարձից։

Վերջիններիս ի պատասխան, ՊԵԿ նախագահ Ռ.Բաղասյանը նշեց, որ նշված առաջարկների հետ կապված կմտածեն ու լրացուցիչ կքննարկեն։

Հ. Սահակյանի բարձրացրեց հարց, որը վերաբերում էր անալիտիկ հաշվառման և անուղղակի մեթոդի կիրառման կարգավորումներին, մասնավորապես՝ նշեց, որ 351-րդ հոդվածում նախատեսվող լրացմամբ ավելանում է 2 կետ հիմքերի մեջ։ Ընդ որում, ավելացվող նոր կետերում նշվում է հետևյալ ձևակերպումը՝ «Հաշվապահական հաշվառման մասին» օրենքով նախատեսված նորմերի կամ կանոնների խախտմամբ վարելը», վերջինիս հետ կապված հարկ է նշել, որ նորմերն ու կանոնները շատ բազմազան են ու հարկերին չեն վերաբերում ու շատ ընդհանրական են ներկայացված, ստացվում է, որ ինչ որ խախտումներ կատարելու պարագայում կկիրառվի անուղղակի մեթոդ։ Նույնը վերաբերում է նաև «հաշվապահական հաշվառման առնչվող հաշվառման փաստաթղթերում թերությունների հայտնաբերումը» ձևակերպմանը։ Նշվեց, որ վերջինիս հետ կապված շատ սուբյեկտիվ տեսակետներ կարող են լինել, քանի որ հաշվառման փաստաթղթերի հստակ փաստաթղթերի կանոններ չկան, այլ ընդհանուր նշվում է, թե դրանք ինչ տեղեկատվություն պետք է պարունակեն։ ՊԵԿ նախագահ Ռ. Բաղասյանը նշեց, որ կքննարկեն և անհրաժեշտության դեպքում կհստակեցնեն ձևակերպումները։

Հաջորդ հարցը վերաբերում էր բանկային գաղտնիքին, մասնավորապես՝ քաղվածքների մասով նշված այն ձևակերպմանը, համաձայն որի՝ «հստակ ներկայացվում են յուրաքանչյուր օրվա կտրվածքով հաշվի դեբետագրումները, կրեդիտագրումները, դրանց նպատակը, ստացողը։ Նշեց, որ «հստակ» ձևակերպումը հստակեցման կարիք ունի հետագա տարընկալումներից խուսափելու համար։

Հարց բարձրացվեց նաև նախագծի անցումային դրույթներով նախատեսվող՝ օրենքն ուժի մեջ մտնելու օրվանից ֆիզիկական անձանց մինչև օրենքն ուժի մեջ մտնելը կատարված (հաշվառված կամ պետական գրանցում ստացած) ավտոմեքենայի օտարման, անշարժ գույքի օտարման, վարձակալության գործարքներից առաջացած օրենսգրքով սահմանված կարգով և մինչև 100 հազար դրամ գումարի չափով հաշվարկված վճարման ենթակա հարկերի՝ չկատարված պարտավորություններից և դրանց նկատմամբ հաշվարկված տույժերից ազատելու դրույթի հետ կապված: Նշվեց, որ ինչ որ պահի հարկային պարտավորություն ներելը արդարարության խնդիր է առաջացնում, անհրաժեշտ է այլ լուծումներ գտնել, քանի որ չվճարելու պրակտիկա է ձևավորվելու: ՊԵԿ նախագահ Ռ. Բաղասյանը նշեց, որ համաձայն է ներկայացված դիտարկումների հետ և ավելի ճիշտ կլինի կիրառել վաղեմության ժամկետ:

Բանկերի միության ներկայացուցիչ Ս. Սարգսյանը հարց բարձրացրեց բանկային գաղտնիք հանդիսացող տեղեկությունների տրամադրման հետ կապված: Մասնավորապես՝ նշվեց, որ նախագծով նախատեսվում է, որ հարկ վճարողի կողմից հարկային մարմնին տրամադրված՝ բանկային հաշիվների քաղվածքների իսկությունը հարկային մարմինը կարող է ներկայացնել բանկային հաշիվը սպասարկող բանկ հավաստման նպատակով: Առաջարկեց, որ բանկային գաղտնիքի մասին տեղեկությունը հարկ վճարողն ինքը ներկայացնի, քանի որ հավաստում ստանալը մեծ բեռ է առաջացնելու բանկերի համար: Բացի այդ կեղծ տեղեկատվություն տրամադրելու մասով սահմանված է քրեական պատասխանատվություն: Նշվեց նաև, որ հիմնավորման մեջ նշված են օրինակներ ֆիզիկական անձանց մասով բանկային քաղվածքներ ստանալու հետ կապված: Վերջինիս ի պատասխան, ՊԵԿ նախագահ Ռ. Բաղասյանը նշեց, որ միգուցե նշեն, որ կասկածների դեպքում հավաստում կստանան բանկից, իսկ ինչ վերաբերում է հիմնավորման մեջ նշվածին, ապա այն կփոխվի:

«Աուդիտորների պալատ» ՀԿ ներկայացուցիչ Ն. Սարգսյանը ներկայացրեց հարց կապված անալիտիկ հաշվառման սահմանման հետ, մասնավորապես՝ նշեց, որ նախագծով նշվում է, որ «անալիտիկ հաշվառումը առանձին միավոր ապրանքի կամ

միավոր այլ ակտիվի կամ միավոր ծառայության կամ միավոր աշխատանքի սկզբնական և հաշվեկշռային արժեքի հաշվարկման միջոցով հաշվառման վարում:»: Վերջինս առաջարկեց, որ անալիտիկ հաշվառում հասկացությունը փոխվի և տրվի այնպիսի ձևակերպում, ինչպիսին, որ սահմանված է հաշվապահական հաշվառման տեսության մեջ, այն է՝ «անալիտիկ հաշվառումը՝ անվանական, քանակային, գումարային հաշվառումն է»: Միաժամանակ, նշեց, որ օրինակ՝ հաշվապահական հաշվառման մեջ պաշարներն հաշվառվում են սկզբնական արժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով, իսկ հարկային հաշվառման մեջ հաշվառվում է միայն սկզբնական արժեքով: Հաջորդ փաստարկը վերաբերում էր «միավոր ծառայության հաշվառում» ձևակերպմանը՝ հաշվի առնելով այն հանգամանքը, որ ծառայությունները որպես ակտիվ չեն հաշվառվում, ուստի առաջարկեց փոխել այդ ձևակերպումը: Միաժամանակ, առաջարկեց ձևակերպման հետ կապված առաջարկությունները ներկայացնել գրավոր: Հաջորդիվ, անդրադարձավ փաստաթղթերի չտրամադրման մասով նախագծով նախատեսվող ձևակերպմանը և առաջարկեց, որ նշվի, որ գրավոր պահանջի դեպքում տրամադրվեն փաստաթղթերը: Առաջարկեց նաև փոփոխություն նախատեսվի արտադրական գործունեություն իրականացնող միկրոձեռնարկատիրության սուբյեկտից ձեռքբերումների մասով ընդհանուր հարկման համակարգում գործող հարկ վճարողների ծախսերի նվազեցման փաստաթղթավորման հետ կապված առկա խնդիրները կարգավորելու համար:

«Հայաստանի հաշվապահների և աուդիտորների ասոցիացիայի» ներկայացուցիչ Ա. Հարությունյանը անդրադարձավ անալիտիկ հաշվառման հասկացությանը: Նշեց, որ ընդունելի է համարում ձևակերպումը և համամիտ չէ հաշվեկշռային արժեքի մասով նշված դիտարկմանը, քանի որ ՀՀ հարկային օրենսգրքով սահմանված է հաշվեկշռային արժեք հասկացությունը: Միաժամանակ, առաջարկեց, որպեսզի հասկացության մեջ սահմանվի նաև, որ «միավոր» ասելով հասկանում են այն մակարդակը, որի համար կազմակերպությունը սահմանում է գին՝ արտացոլելով դրանց ձևավորումն ու հետագա փոփոխությունները: ՊԵԿ նախագահ Ռ. Բաղասյանը նշեց, որ մանրամասները աշխատանքային կարգով կքննարկեն:

«Էրնսթ Ընդ Յանգ» ՓԲԸ ներկայացուցիչ Կամո Կարապետյանն առաջարկեց, որ էլեկտրոնային առևտրի և էլեկտրոնային ծառայությունների հաշվետու ժամանակաշրջանները լինեն համընդհանուր, այսինքն՝ կամ լինեն ամսական, կամ եռամսյակային: Վերջինիս ի պատասխան, ՀՀ ՊԵԿ ՎՄԸ վարչության պետ Հ. Մուրադյանը նշեց, ժամանակին էլեկտրոնային ծառայությունների համար հաշվետու ժամանակաշրջանի սահմանման հետ կապված հաշվի են առել իրենց կողմից ներկայացված առաջարկները եռամսյակային դարձնելու մասով: Միաժամանակ, նշեց, որ համապատասխան մանրամասն առաջարկներ ներկայացնելու պարագայում կքննարկեն հաշվետու ժամանակաշրջանի մասով փոփոխություն կատարելու նպատակահարմարության հարցը:

«Եվրոպական բիզնես ասոցիացիա» ՀԿ ներկայացուցիչ Դ. Սարումովան հանդես եկավ խնդրանքով, որ օրենսդրական նախաձեռնությունները հաճախակի բնույթ չկրեն: Միաժամանակ, հայտնեց, որ վերջին տարիներին իրականացված շուկայական հետազոտությունների ժամանակ որպես մտահոգություն նշվում է հաճախակի տեղի ունեցող օրենսդրական փոփոխությունները, ուստի առաջարկեց օրենսդրական փոփոխությունները հաճախակի տեղի չունենան կամ օրենսդրական փոփոխություններ նախաձեռնելու դեպքում, դրանք ուժի մեջ մտնեն օրինակ՝ 3 տարի հետո:

ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ՎԱՐՉԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՍԱՐԱՐԱԿԱԿԱՆ
ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ՝

11/1/2022

X

ՌՈՒՍՏԱՄ ԲԱԴԱՍՅԱՆ

Signed by: BADASYAN RUSTAM 3701910731

ՌՈՒՍՏԱՄ ԲԱԴԱՍՅԱՆ